

տական ջուժուժի համար՝ վիրաբուժական գործողութիւն մը անհրաժեշտ է:

Արիւն կարելի է առնել դարձեալ լայներակութեան (varice) պարագային, բայց անոր օգուտը այս մարզին մէջ սահմանափակ և անցողական ըլլալով, կարելի է զայն աւելորդ համարել:

Վերջապէս կարելի է արիւն առնել կարգ մը ուրիշ պարագաներու տակ, օրինակ զելուձներու մէջ, քթի արիւնահոսութեան մէջ, գլխու ցաւերու և քրոնիկ պալարներու մէջ:

Կը տեսնէք թէ արիւն առնելու պարագաներու սահմանը ձեր կարծածէն աւելի ընդարձակ է, միայն թէ պէտք չէ քաշուիլ ըսելու որ ասիկա ախտանիշներու մեղմացուցիչ դարման մըն է, և ոչ արմատական Արիւնահոսութեան շնորհիւ կարելի է կարգ մը հիւանդութիւններ առժամապէս դարմանել, բայց ոչ բուժել. այնուամենայնիւ նոյնիսկ իբրև առժամեայ դարման, պէտք է պահել և գործածել զայն ժամանակ առ ժամանակ, երբ հիւանդները մեզմէ ուրիշ բան չեն ըսպասեր՝ եթէ ոչ քիչ մը սփոփում:

ԲԺ. Ա. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ԸՆԹԵՐՅՈՂ

ԴՈՒՆ ՈՐ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»Ը, ԿՐ ԿԱՐՂԱՍ Ե Կ՝ՕՂԱՌԻՍ, ՉԵՍ ՈՒՋԵՐ ՃԻԳ ՄԸ ԸՆՆԵԼ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով ծանօթներդ, որպէսզի ուրիշներն ալ կարդան, սիրեն և օգտուին «Բուժանք»էն և զարգացնեն զայն:

ԻՍԿ ԴՈՒՆ ՈՐ ՈՒՐԻՇԻՆ «ԲՈՒԺԱՆՔ»Ը ԿԸ ԿԱՐԴԱՍ, գիտցիր որ չի բաւեր կարդալ, այլ պէտք է ունենալ և պահել «Բուժանք»ը, որու մէկ խորհուրդը կրնայ քանի մը անգամ փոխարինել տուած բաժնեգինդ:

ՈՒՐԵՄՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԷ:

«ԲՈՒԺԱՆՔ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՏՕՔԹ. ՔԷՉԵԱՆ (Մարտէյլ), մէկ տարեկան՝ Դպրոցատէր Տիկնանց Վարժարանին (Մարտէյլ):

Շատ մը հանրային հաստատութիւններ, և գրադարանային և այլ միութիւններ, որբանոցներ եւլն. մեզ գիտելով կը խնդրեն որ ձրի «Բուժանք» զրկենք իրենց:

Ընթերցող, չե՞ս ուզեր տարեկան օրինակ մը նուիրել: